+374 55 181119 info@arz.am

Պետական ծրագիր

Ավիացիա. Նոր ավիաուղիներ

Վերջին տասնամյակները նշանավորվել են համաշխարհային ավիացիայի զգալի փոփոխություններով. միջմայրցամաքային թռիչքները սկսել են իրականացնել հիմնականում այն ավիաընկերությունները, որոնց բազային օդանավակայանները ունեն տարանցիկ առավելություններ:

Հայաստանի աշխարհագրական դիրքն ու մերձակայությունը Եվրոպային տալիս է հնարավորություններ հայկական ավիացիայի համար՝ հատկապես **խոշոր միջմայրցամաքային ավիաընկերության** ստեղծման դեպքում:



Հայաստանից մինչև Եվրոպայի միջին ու փոքր օդանավակայանների հեռավորության հաշվին հնարավոր է արևմտյան ուղղություններում **օգտագործել նեղիրան միջին հեռահարության ինքնաթիռներ և ուղևորահոսքը հովհարաձև եղանակով բաշխել Եվրոպայի բազմաթիվ քաղաքներով:**

Արևելյան ուղղություններում նախապատվությունը տրվում է **լայնիրան երկար հեռահարության ինքնաթիռների շահագործմանը:**

+374 55 181119 info@arz.am

Պետական ծրագիր

Ավիացիա. Նոր ավիաուղիներ

Հայաստանում տրանսֆերով միջմայրցամաքային թռիչքի դեպքում հնարավոր է սահմանափակվել **երկու թռիչքով երեքի փոխարեն՝ գրեթե բոլոր ուղղությունների համար:**

Հայաստանից դեպի Եվրոպա երեկոյան չվերթները ժամանում են երեկոյան ժամերին, իսկ Եվրոպայից դեպի Հայաստան գիշերային չվերթները կարող են ժամանել առավոտյան, ինչն օգնում է օդային երթևեկության և տրանսֆերները արդյունավետ կառավարմանը:

Ավիացիոն ենթակառուցվածք ու նավատորմ.
- «Զվարթնոց» օդանավակայանի ընդլայնումն ու արդիականացումը (տարեկան մինչև 120 մլն ուղևոր), մինչև 3 նոր թռիչքուղու կառուցում:
- Անհրաժեշտ ավիապարկ. մինչև 250 լայնիրան ու նեղիրան ինքնաթիռներ (ֆինանսական կամ օպերատիվ լիզինգ):
- Բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստում. բավարար տեխնիկական ու կազմակերպչական իրավասություն ունեցող գործընկերների ներգրավվում:

Նախագծից բխող շահերն ու հնարավորությունները.
Լոգիստիկայի կտրուկ օպտիմիզացում
Աշխարհագրական մեծ ընդգրկում
Բնապահպանական ծախսերի կրճատում
Բեռնափոխադրումների շուկայի գրավում
Ժամանակակից ինքնաթիռների շահագործում
Աշխատատեղերի ստեղծում
Հայաստանի տնտեսական աճ և զարգացում

Նախագծի շուրջ իրականացվում են բանակցություններ անհրաժեշտ իրավասություն ունեցող ընկերությունների հետ: Նախագիծը պետք է ստանա **պետական ծրագրի** կարգավիճակ: